



Եւ Տէր Աստուած ըսաւ. "Լաւ չէ, որ մարդը առանձին մնայ: Եւ անոր օգնական մը պիտի ստեղծեմ": Աստուած Ադամի առջեւ բերաւ ամեն գազաններն ու թռչունները:

19




Ադամ ամենուն անուն մը տուաւ: Ան շատ խելացի պետք է, որ ըլլայ որ այդ գործը ամբողջացնէ: Սակայն ամբողջ այդ անասուններուն եւ գազաններուն մէջ որեւէ կողակից չկար Ադամի:

20



Աստուած Ադամը խորունկ, շատ խորունկ քունի մը անցուց: Ան Ադամի կողէն ոսկոր մը առաւ եւ Աստուած կինը ստեղծեց Ադամի կողի ոսկորէն: Կինը, որ Աստուած ստեղծեց Ադամի լաւագոյն կողակիցը պիտի ըլլար:

21



Աստուած ամեն ինչ վեց օրուայ մէջ ստեղծեց: Յետոյ Աստուած օրինեց եօթներորդ օրը եւ հանգստեան օր հռչակեց:

22



Շղենի Պարտեզին մէջ, Ադամ եւ Եւա, իր կինը հրաշալի կեանք մը կ'ապրէին Աստուծոյ հնազանդելով: Աստուած անոնց Տէրն էր, իրենց հայթայթողը եւ իրենց ընկերը:

23

Երբ Աստուած ստեղծեց ամեն ինչ Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը, Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Ծննդոց 1 - 2

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:" Մաղմուս 119:130

Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեզը կը կոչէ: Մեքեան պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի իսկապէս մեզի մեղքերն ու մեղքերը համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեզը կը բնակի իսկ դուն յաւիտեան Իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ իմմա Ան անգամ մը ես կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքս մէջ եւ ներես թողոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետոյ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ Գիրքը եւ ամեն օր Աստուծոյ հետ խօսիր: Յովհաննու 3:16

Հայերէն Armenian



Written by Edward Hughes
Translated by Most Rev. Prof. Varant Zareh Seropian
Illustrated by Byron Unger; Lazarus
Adapted by Bob Davies; Tammy S.

Story 1 of 60

M1914.org

Bible for Children, PO Box 3, Winnipeg MB R3C 2G1 Canada

License: You have the right to copy or print this story, as long as you do not sell it.



Ո՞վ մեզի ստեղծեց: Սուրբ Գիրքը, Աստուծոյ խօսքը, մեզի կը պատմէ թէ ինչպէս մարդը ծնունդ առաւ:




Երկար ժամանակ առաջ, Աստուած ստեղծեց Ադամը աշխարհի հողէն ստեղծեց: Երբ Աստուած կեանք փչեց Ադամի մէջ, ան կենդանացաւ:


1

2


Նախքան որ Ադամը ստեղծե, Աստուած աշխարհը ստեղծեց եւ հրաշալի բաներով լեցուց զայն:



Զայլ առ քայլ Աստուած ստեղծեց լեռները, դաշտերը, անուշաբոյր ծաղիկները, երկար ծառերը, բիրաւոր թռչունները եւ տզտզացող մեղունները, հզօր կէտ ձուկերը եւ կպչուն խխունջները: Իրականութեան մէջ Աստուած ստեղծեց ամեն ինչ:



Սկիզբը, Նախքան որ Աստուած ստեղծագործութեան անցնի, բան մը գոյութիւն չունէր բացի Աստուծմէ, ոչ մարդիկ, ոչ տեղեր եւ ոչ ալ ուրիշ բաներ: Ոչինչ: Ոչ լոյս, ոչ մութ: Ոչ վեր, ոչ վար, ոչ երեկ եւ ոչ ալ վաղը: Միայն Աստուած կար, որ սկիզբ չունէր: Սակայն յանկարծ Աստուած գործի անցաւ:



Սկիզբը, Աստուած ստեղծեց երկինքը եւ երկիրները:


Աշխարհը պարապ էր եւ ձեւ մը չունէր: Եւ մթութիւնը ամեն տեղ ծածկած էր:




Յետոյ Աստուած խօսեցաւ: "Թող որ լոյս ըլլայ":




Եւ լոյսը եղաւ: Աստուած այս լոյսը կոչեց ցերեկ եւ մութը կոչեց գիշեր: Եւ առտուն եւ իրիկունը եղան առաջին օրը:



Երկրորդ օրը, Աստուած ստեղծեց ովկիանոսներուն ջուրերը, ծովերը եւ լիճերը երկինքին տակ: Երրորդ օրը, Աստուած ըսաւ, "Թող որ ցամաքը դուրս գայ": Եւ այդպէս եղաւ:



Նոյնպէս Աստուած հրամայեց խոտին, ծաղիկներուն, թուփերուն եւ ծառերուն, որպէսզի երեւին: Եւ անոնք երեւցան: Եւ գիշերը ու ցերեկը եղան երրորդ օրը:




Ետքը Աստուած ստեղծեց արեւը, յետոյ լուսինը եւ զանազան աստղեր, որ անթիւ եւ անհամար են: Եւ գիշերը ու ցերեկը եղան չորրորդ օրը:



Ծովու կենդանիները եւ ձուկերը ու թռչունները յաջորդն էին Աստուծոյ ծրագրին մէջ: Զինգերորդ օրը Աստուած ստեղծեց հսկայ սողոցածուկ եւ մանր ձուկեր, երկար ոտքերով թռչնազգիներ եւ փոքր թռչուններ:



Աստուած ստեղծեց ձուկերը, որ լեցնեն որ վայելէն երկինքը, ծովերը եւ ցամաքը: Եւ գիշերը ու ցերեկը եղան հինգերորդ օրը:



Այդկէ ետք, Աստուած անգամ մը եւս խօսեցաւ: Ան ըսաւ. "Թող որ հողը առաջ բերէ արողի էակներ...": Ամեն տեսակի անասուն, միջատ եւ սողուն գոյութեան եկան: Կային հսկայ փիղեր եւ աշխուժ սկոյրներ: Կապիկներ եւ կոկորդիլիոսներ: Որդիներ եւ դաշտամուկներ: Ընծուղտներ եւ կատուներ: Ամեն տեսակի անասուն այդ օրը ստեղծուեցաւ Աստուծոյ հրամանով: Եւ գիշերը ու ցերեկը եղան վեցերորդ օրը:



Վեցերորդ օրը Աստուած շատ հրաշալի բան մըն ալ ըրաւ: Զիմա ամեն ինչ պատրաստ էր մարդուն համար: Լեցուն ուտելիք կար եւ լեցուն անասուններ, որ զինք ծառայէն:



Եւ Աստուած ըսաւ. "Թող որ մարդը ստեղծուի մեր պատկերով, եւ թող որ ըլլայ Տէր աշխարհի վրայ": Եւ այս ձեւով Աստուած ստեղծեց մարդը իր պատկերով: Աստուծոյ պատկերով Ան զինք ստեղծեց...



Աստուած խօսեցաւ Ադամի հետ: "Կեր ինչ որ կը ցանկաս այս պարտեզէն: Սակայն բարիի եւ յարի գիտութեան ծառն չուտես: Եթէ ուտես այդ ծառն վատահ որ պիտի մեռնիս":

